ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 12/16

05.12.2016թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն), քննարկելով «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 04.02.2014թ., ուժի մեջ է մտել 01.07.2014)[1]՝ 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 9-րդ հոդվածի 4-րդ մասի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց՝

Քաղաքացի Հայկ Մարգարյանը (այսուհետ՝ Դիմող, ներկայացուցիչներ՝ Արայիկ Ղազարյան, Արտակ Զեյնալյան, Արաքս Կիրակոսյան) ՀՀ Սահմանադրական դատարանից խնդրել են որոշել «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 9-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 1-ին, 10-րդ, 60-րդ, 73-րդ, 78-րդ, 83-րդ և 80-րդ հոդվածներին համապատասխանության հարցը:

Դիմողի կարծիքով՝ վիճարկվող իրավակարգավորումը հանգեցնում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 83-րդ հոդվածներով երաշխավորված անձի սոցիալական ապահովության իրավունքի այնպիսի սահմանափակմանը, որը չունի օբյեկտիվ և ողջամիտ հիմնավորում: Սոցիալական ապահովության իրավունքն անձանց հնարավորություն է տալիս պետությունից պահանջելու կատարել որոշակի պոզիտիվ պարտավորություններ:

[1] Տե՛ս ՀՀՊՏ 2014.02.26/8(1021):

Մեջբերելով Եվրոպական դատարանի և ՀՀ Սահմանադրական դատարանի մի շարք որոշումներ՝ դիմողը պնդում է, որ սոցիալական ապահովության իրավունքը սեփականության իրավունքի դրսևորումներից մեկն է: Դիմողը գտնում է, որ դիմումատուն դեռ վաղուց ձեռք է բերել իր պաշտոնային դրույքաչափը բարձրացնելուն զուգահեռ կենսաթոշակի չափի վերահաշվարկի օրինական սպասելիք, սակայն վիճահարույց իրավակարգավորման պայմաններում խախտվել է իր սպասելիքի իրավունքը:

Դիմողի կարծիքով՝ վիճարկվող իրավակարգավորումը նվազեցնում է նաև դատախազների սոցիալական պաշտպանության երաշխիքները: Այն չի ապահովում սահմանադրական և օրենսդրական զարգացման տեսանկյունից դատախազի սոցիալական անկախության երաշխիքները և դրանց հետագա ամրապնդումը:

Ըստ դիմողի՝ վիճակվող իրավակարգավորումը անձի իրավական վիճակը վատթարացնող բնույթ ունի, քանի որ անձին զրկում է սոցիալական ապահովության այնպիսի իրավունքից, ինչպիսին կենսաթոշակի վերահաշվարկի իրավունքն է: Այս առումով, դիմողի պնդմամբ, վիճարկվող դրույթները հակասում են նաև իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին:

Ելնելով վերոգրյալից՝ դիմողը գտնում է, որ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 9-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության 1-ին, 10-րդ, 60-րդ, 73-րդ, 78-րդ, 83-րդ և 80-րդ հոդվածներին և ենթակա են անվավեր ճանաչման:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Վիճարկվող նորմերի սահմանադրականության հարցը պարզելու համար անհրաժեշտ է դրանք դիտարկել հատկապես ՀՀ սահմանադրությամբ սահմանված սոցիալական ապահովության իրավունքի և սեփականության իրավունքի սահմանադրական սկզբունքի համատեքստում:

ա) Սոցիալական ապահովության սահմանադրական իրավունք

ՀՀ սահմանադրության 83-րդ հոդվածի համաձայն՝

Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության,

գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք:

Սոցիալական պետության հիմնական խնդիրներից է՝ իրականացնել այնպիսի սոցիալական քաղաքականություն, որը կապահովի հանրության յուրաքանչյուր անդամի համար բավարար կենսամակարդակ, այդ թվում՝ բոլոր այն դեպքերում, երբ անձն իրենից անկախ պատճառներով անկարող է աշխատել: Այդպիսի սոցիալական քաղաքականությունը ենթադրում է սոցիալական ապահովման արդյունավետ համակարգի կազմակերպում, որն առաջին հերթին կներառի պետության կողմից իրականացվող համալիր միջոցառումներ՝ ուղղված քաղաքացիների սոցիալական ապահովմանը և սպասարկմանը՝ կյանքի տարբեր իրավիճակներում, երբ որ քաղաքացիներն անկարող են իրենց աշխատանքով ստանալ եկամուտ կամ վարձատրվել՝ ապահովելով իրենց կենսամակարդակը[1]:

ՀՀ Սահմանադրությունը, 1-ին հոդվածում Հայաստանի Հանրապետությունը հռչակելով որպես սոցիալական պետություն, 83-րդ հոդվածում ամրագրել և ճանաչել է յուրաքանչյուրի սոցիալական ապահովության իրավունքը որպես մարդու հիմնական իրավունքներից մեկը: Ուստի, Սահմանադրության 1-ին և 3-րդ հոդվածի ուժով պետությունը սահմանափակված է նաև այս իրավունքով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Բացի ՀՀ Սահմանադրությունից, սոցիալական ապահովության իրավունքն ամրագրված է նաև ՀՀ իրավական համակարգի բաղկացուցչ մասը կազմող միջազգային իրավական փաստաթղթերում, ինչպիսիք են՝ օրինակ, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին 1966թ. դեկտեմբերի 16-ի միջազգային դաշնագիրը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. Եվրոպական կոնվենցիան և այլ փաստաթղթեր, որոնց միանալով Հայաստանի Հանրապետությունը պարտավորություն է ստանձնել ճանաչելու և երաշխավորելու յուրաքանչյուրի սոցիալական ապահովության իրավունքը:

Սոցիալական ապահովության իրավունքին բազմիցս անդրադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում: Մասնավորապես, ՀՀ սահմանդրական դատարանն իր 02.04.2014թ. թիվ ՍԴՈ 1142 որոշման 9-րդ կետում սահմանել է. «… **Սոցիալական ապահովությունն անձի իրավունք լինելուց զատ պետության պոզիտիվ պարտավորությամբ պայմանավորված նպատակային գործառույթ** է, քանի որ ուղղված է հասարակության այն խավերի կենսագոյի ապահովմանը, ովքեր իրենցից անկախ պատճառներով դա անել չեն կարող: Առավել լայն հասկացություն է սոցիալական պաշտպանությունը, որը ներառում է ոչ միայն

[1] ՀՀ սահմանադրական դատարանի 02.04.2014թ. թիվ 1142 որոշում, կետ 7:

սոցիալական ապահովությունը, այլև սոցիալական ապահովագրությունը և պետության ու հասարակության կողմից իրականացվող սոցիալական օգնությունը»:

Նույն որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ սոցիալական ապահովության իրավունքի երաշխավորման, ապահովման ու պաշտպանության հիմնական առանձնահատկություններից մեկն այն է, որ սահմանադրական դրույթի՝ հոդված 37-ի (մինչև 2011թ.ի սահմանադրական փոփոխությունները գործող խմբագրությամբ քննարկվող սահմանադրական նորմն ամրագրված էր Սահմանադրության 37-րդ հոդվածում) հիման վրա սոցիալական ապահովության ծավալն ու ձևերը սահմանվում են օրենքով:

«Սահմանադրական իրավակարգավորումից հստակ է, որ օրենսդրի հայեցողությանն է թողնված ինչպես սոցիալական ապահովության ծավալի՝ քանակական որոշակիության, այնպես էլ ձևերի ընտրության խնդիրը: **Տվյալ ոլորտում, համաչափության և համամասնականության հիմնարար սկզբունքների պահանջներից ելնելով՝ հայեցողության սահմանները պայմանավորվում են, մի կողմից, պետության սոցիալ-տնտեսական հնարավորություններով, մյուս կողմից՝ սոցիալական պետության սահմանադրական բնույթի պահանջներով:**

Վեճի առարկա նորմերի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման տեսանկյունից էական է, թե ինչպես են վերոնշյալ հանգամանքները հաշվի առնվել մեր երկրում կենսաթոշակային բարեփոխումների գործընթացում»:

Քննարկվող սահմանադրական դիմումով վեճի առարկա հանդիսացող «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

3. Սույն օրենքով սահմանված կենսաթոշակի չափը վերահաշվարկվում է հիմնական կենսաթոշակի չափը, մասնագիտական ստաժի մեկ տարվա արժեքը, գործակիցը փոխվելու դեպքում:

Նույն օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի անդամին, դատավորին, դատախազին, հատուկ քննչական ծառայության ծառայողին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը նշանակված կենսաթոշակները, սույն օրենքի 9-րդ հոդվածով նշանակված կենսաթոշակները համարվում են սույն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն նշանակված կենսաթոշակներ և հաշվարկվում են սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված կարգով՝ հաշվի առնելով հիմնական կենսաթոշակի չափը, «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով անձի զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված գործակիցը և մասնագիտական ստաժի մեկ տարվա արժեքը:

Եթե հաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է նախկին (սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված) չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին (սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված) չափով:

Հարկ է նշել, որ ներկայումս պետական պաշտոններ զբաղեցնող անձանց կենսաթոշակի նշանակման և կենսաթոշակի չափի վերահաշվակման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքով: Մինչ այս օրենքի ընդունումը դատախազների կենսաթոշակի հետ կապված հարաբերությունները կարգավորվում էին «Պետական կենսաթոշակների մասին», «Դատախազության մասին» և այլ օրենքներով:

«Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ սույն գործով վիճարկվող դրույթների ուժով սահմանափակվեց դատախազների կենսաթոշակի վերահաշվարկի իրավունքը, ինչն ըստ էության հարուցում է այդ նորմերի սահմանադրականության խնդիր:

Քննարկվող գործի հանգամանքներով վիճարկվող օրենքի դրույթների սահմանադրականության հարցը պարզելու համար հարկ է անդրադառնալ այն հարցին, թե որքանո՞վ է հիմնավորված և ի՞նչ հանգամանքներով է պայմանավորված պաշտոնատար անձանց, մասնավորապես՝ դատախազների կենսաթոշակային «բարեփոխումների» գործընթացում օրենսդրի հայեցողության այնպիսի դրսևորումը, ինչպիսին դատախազների կենսաթոշակի վերահաշվարկման իրավունքի սահմանափակումն է: Այլ կերպ ասած՝ քննարկվող բնագավառում կենսաթոշակային բարեփոխումներ իրականացնելու վերաբերյալ վիճարկվող օրենքն ընդունելիս արդյո՞ք օրենսդիրը հիմնվել է համաչափության և համամասնականության հիմնարար սկզբունքների վրա, և պետության սոցիալ-տնտեսական ինչպիսի՞ հնարավորություններով է պայմանավորված քննարկվող կատեգորիայի անձանց կենսաթոշակի վերահաշվարկման իրավունքի սահմանափակումը օրենսդրի կողմից:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման և օրենսդրական փաթեթի ներկայացման գործընթացում որևէ անդրադարձ չի արվել վերը նշված հանգամանքներին, վիճարկվող օրենքի գործողության տակ ընկնող պաշտոնատար անձանց, այդ թվում՝ դատախազների կենսաթոշակի վերահաշվարկի իրավունքի սահմանափակումը որևէ կերպ կախվածության մեջ չի դրվել պետության սոցիալ-տնտեսական հնարավորություններից, չի հիմնավորվել կենսաթոշակի վերահաշվարկման իրավունքի սահմանափակումը պայմանավորող հանգամանքների առկայությունը և դրանց ողջամիտ ազդեցությունը դատախազների կենսաթոշակի չափի համամասն և համաչափ վերահաշվարկի հնարավորության վրա, ինչի արդյունքում

պետությունը, փաստորեն, չի կատարել անձի սոցիալական իրավունքի ապահովման իր պոզիտիվ պարտավորությամբ պայմանավորված նպատակային գործառույթը:

Այսպիսով, գտնում ենք, որ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 9-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթները ՀՀ Սահմանադրության 83-րդ հոդվածին համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց է:

բ) Սեփականության սահմանադրական իրավունք

Սույն գործով վեճի առարկա իրավադրույթները քննության առարկա պետք է դարձվեն նաև սեփականության իրավունքի ճանաչման, երաշխավորման և պաշտպանության սահմանադրական մոտեցումների տեսանկյունից:

Կենսաթոշակի իրավունքը սոցիալական ապահովության միջոցի իրավունք լինելով հանդերձ, գույքային իրավունք է, սեփականության ձև, որը երաշխավորված է ՀՀ սահմանադրության 10-րդ և 60-րդ հոդվածներով:

ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի համաձայն՝

1. Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Կենսաթոշակը, ինչպես նաև աշխատավարձը՝ քաղաքացու վաստակած միջոցներ են և նրա սեփականությունը: Կենսաթոշակի վճարումը գործնականում սեփականությունը սեփականատիրոջը փոխանցելու միջոց է:

Կենսաթոշակի իրավունքը սեփականության իրավունքի պաշտպանության համատեքստում դիտարկելու մոտեցումն առաջին հերթին արձանագրվել է ՀՀ սահմանադրական դատարանի պրակտիկայում: Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանն այդ կապակցությամբ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Կենսաթոշակի վճարումը գործնականում սեփականությունը սեփականատիրոջը փոխանցելու միջոց է: Կենսաթոշակը սոցիալական ապահովության միջոց լինելով հանդերձ, սեփականության ձև է՝ նաև ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի *(տես՝ Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործը):* Հետևաբար, անհրաժեշտություն է ծագում դիտարկել օրենքի վիճարկվող դրույթները նաև Սահմանադրության 8 և 31 հոդվածների պահանջներից ելնելով, որոնցից առաջինը հռչակում է սեփականության իրավունքի ճանաչումն ու պաշտպանությունը, իսկ

երկրորդն ամրագրում է. «Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի»[1]:

2008թ. մարտի 18-ի թիվ ՍԴՈ-741 որոշման մեջ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը նշել է. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31-րդ հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք»:

Սույն գործի հանգամանքներով, գտնում ենք, որ խախտվել է նաև անձի սեփականության սահմանադրական իրավունքն այնքանով, որքանով խնդրո առարկա օրենքի գործողության դաշտում հայտնված անձինք զրկվել են իրենց սեփականությունը հանդիսացող այն կենսաթոշակից, որի նկատմամբ վերջիններիս սեփականության իրավունքը ճանաչված է օրենքի ուժով, կամ նշված անձինք այդ կենսաթոշակը որպես սեփականություն ձեռք բերելու օրինական ակնկալիք ունեին մինչև այդ կենսաթոշակն իրենց փաստացի չվճարելը:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը 2012թ. փետրվարի 24-ի ՍԴՈ-1009 որոշման մեջ արձանագրել է. «Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ սեփականության իրավունքը ճանաչելով որպես յուրաքանչյուրի հիմնական իրավունք, բացահայտվում է այդ իրավունքի բովանդակությունը, այն է՝ իր սեփականությունը տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իրավազորությունները՝ միաժամանակ որպես դրանց իրացման նախապայման սահմանելով **սեփականատիրոջ հայեցողությունը:** Սահմանադրական այս նորմում «իր հայեցողությամբ» ձևակերպման շեշտադրմամբ սեփականության իրավունքի իրացման հիմքում դրվել է սեփականատիրոջ հստակ արտահայտված կամքը, վերջինս դիտարկվում է որպես սեփականության իրավունքի իրացման պարտադիր նախապայման, և սեփականության իրացման գործընթացում վճռորոշ դերակատարություն է հաղորդվում անձի կամաարտահայտությանը: Այս դրույթի բովանդակությունը հանգում է նրան, որ գույքային իրավունքների իրացումը պետք է իրականացվի սեփականության անձեռնմխելիության և պայմանագրային ազատության սկզբունքների հիման վրա, որոնք ենթադրում են, ի թիվս այլնի, **քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների կամքի ինքնավարություն և գույքային ինքնուրույնություն»:**

Վերը շարադրված դիրքորոշման վերլուծությունը ցույց է տալիս, որ վիճարկվող օրենքի դրույթն անմիջականորեն միջամտում է Դիմողի կենսաթոշակի իրավունքի՝

[1] ՀՀ սահմանդրական դատարանի 04.10.2006թ. թիվ ՍԴՈ-649 որոշում:

որպես սեփականության գույքային իրավունքի իրականացմանը, խաթարում վերջինիս սեփականության անձեռնմխելիությունը: Նման միջամտությունն անձին զրկում է իր վաստակած կենսաթոշակը սեփական հայեցողությամբ, ազատ կամաարտահայտությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու սահմանադրական իրավազորություններից:

Կարծում ենք, իրավական որոշակիության տեսանկյունից ևս վերոնշյալ կարգավորումները խնդրահարույց են:

Իրավական որոշակիության սկզբունքն իր ամրագրումն է գտել ՀՀ Սահմանադրության 73-րդ, 79-րդ հոդվածներում:

Այսպես,

Հոդված 73. **Օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժը**

1. Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

2. Անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

Այսպես, իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքն իր ամրագրումն է գտել նաև ՀՀ սահմանադրության 79-րդ հոդվածում, որի հաաձայն՝

Հոդված** 79. **Որոշակիության սկզբունքը

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

ՀՀ սահմանադրական դատարանն իր պրակտիկայում բազմիցս անդրադարձել է **լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի** սկզբունքին:[1]

«**Իրավական որոշակիության**, **իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը**: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «...օրենքը պետք է

[1] Տե՛ս, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի 04.05.2010 թիվ ՍԴՈ-881, 09.09.2008 թիվ ՍԴՈ-758 որոշումները:

համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության *(res judicata)* սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է **անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները:** Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:[1]

Վեճի առարկա իրավակարգավորումների պարագայում անձը զրկվում է իր հասանելիք կենսաթոշակն ստանալու իրավունքից այնքանով, որքանով չի իրականանում վերջինիս մոտ ծառայության անցնելիս և դրա ընթացքում ձևավորված՝ **կենսաթոշակ ստանալու լեգիտիմ ակնկալիքը**, որը ողջամտորեն սպասելի էր նրա պաշտոնի նշանակման և պաշտոնավարման ընթացքում:

Այսպիսով, գտնում ենք, որ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 9-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթները ՀՀ Սահմանադրության 10-րդ և 60-րդ հոդվածներին համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց են:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է, որ

- «**Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի** 5-**րդ հոդվածի** 3-**րդ մասի**, 9-**րդ հոդվածի** 4-**րդ մասի դրույթները ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց են**:

Համակարգող՝ Լյուդվիկ Դավթյան

[1] ՀՀ սահմանդրական դատարանի 02.04.2014թ. թիվ ՍԴՈ-1142 որոշումը: